ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 05 » նոյեմբեր 2020թ. No 3888 - Լ

«ԱԼԿՈՍԵՊՏ ԼԵՅԿՈ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Ալկոսեպտ լեյկո» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2020 թվականի նոյեմբեր « 05 » - ի
թիվ 3888 - Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ
«ԱԼԿՈՍԵՊՏ ԼԵՅԿՈ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ալկոսեպտ լեյկո» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստ միջոց:

2. Միջոցը, որպես ազդող նյութեր, պարունակում է պոլիհեքսամեթիլեն գուանիդին հիդրոքլորիդ՝ 2,3 %, դիդեցիլդիմեթիլ ամոնիումի քլորիդ՝ 0,22 %, իզոպրոպիլ սպիրտ (պրոպանոլ-2)՝ 69-72 %, կամ էթիլ սպիրտ՝ 80-84 %, ինչպես նաև՝ մաշկի վիճակը լավացնող բաղադրիչներ:

3. Միջոցը թողարկվում է 30 մլ, 50 մլ, 100 մլ, 250 մլ, 0,5 լ, 1 լ, 5 լ տարաներով: Միջոցի պիտանելիության ժամկետը պատրաստման օրվանից 5 տարի է:

4. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների, ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիաները (թեստավորված Mycobacterium terrae-ի վրա), վիրուսների (ադենովիրուսների, գրիպի, պարագրիպի, ՍՇՎՎ այլ հարուցիչների, էնտերովիրուսների, ռոտավիրուսների, պոլիոմիելիտի, ընդերային և արտաընդերային հեպատիտների (ներառյալ հեպատիտ Ա, Բ և Ց), հերպեսի, ատիպիկ թոքաբորբի, ՄԻԱՎ-վարակի, թռչնի գրիպի (H5N1), խոզի գրիպի (H1N1), կոքսակի, ECHO հարուցիչների) նկատմամբ և սնկասպան հատկություններով:

5. Ըստ սուր թունավորության չափանիշների, միջոցը պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ ստամոքսի մեջ ներմուծվելիս, և մաշկի վրա լցվելիս, աշխատանքային լուծույթները պատկանում են քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին:

6. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն)

(մանկաբարձական ստացիոնար, նեոնատոլոգիական բաժանմունքներ, ֆիզիոթերպևտիկ ուղղվածության բաժանմունքներ և այլն), արյան փոխներարկման կայաններում, կլինիկական, մանրէաբանական, վիրուսաբանական, ախտորոշիչ լաբորատորիաներում, դեղագործական կազմակերպություններում, դեղատներում, սպորտային և մշակութային, առողջարարական համալիրներում, կուրորտաբանության օբյեկտներում, մանկական հաստատություններում (մակապարտեզ, դպրոց և այլն), քրեակատարողական հաստատություններում, վարակի օջախներում, հանրային սննդի օբյեկտներում, մթերային առևտրի կազմակերպություններում, սպառողական շուկաներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (բաղնիք, լողավազան, հյուրանոց, հասարակական զուգարան և այլն), սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպություններում, վարսավիրանոցներում, կոսմետիկական և (կամ) մերսման սրահներում, լվացքատներում, անասնաբուժական և կենդանաբուծական օբյեկտներում, սանիտարական տրանսպորտում, դիահերձարաններում և ծիսական ծառայություն տրամադրող հաստատություններում, բնակչության կողմից՝ կենցաղում կիրառության համար:

7. Միջոցը նախատեսված է սենքերում մակերեսների, սարքերի և սարքավորումների, կոշտ և փափուկ գույքի, գինեկոլոգիական և ատամնաբուժական բազկաթոռների, ատամնաբուժական արտածծող համակարգերի, պտտվող ատամնաբուժական գործիքների, մահճակալների, բարուրասեղանների, վերակենդանացման և գործողությունների սեղանների, վերակենդանացման ներքնակների, լուսավորման սարքերի (բակտերիցիդ լամպեր և այլն), գրասենյակային տեխնիկայի (հեռախոս, մոնիտոր, համակարգչի ստեղնաշար և այլն), մանրադիտակների առարկայական ապակիների, պացիենտի խնամքի պարագաների, ռադիատորի վանդակաճաղերի, գլխադիրների, կոնդենսատի կուտակիչների, ախտորոշիչ և անեսթեզիոլոգիական սարքավորումների, թոքերի արհեստական շնչառության սարքերի, ախտորոշիչ սարքավորումների (ՈՒՁՀ և այլն) տվիչների, ձեռնոցների (կաուչուկից, լատեքսից, նեոպրենից և այլն), ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, կաշվից, գործվածքից, կաշվեփոխարինիչներից, պլաստիկից և ռետինե կոշիկների, հատակի ծածկույթների, պաստառապատման

գործվածքների, մարզագույքի, խաղալիքների, սանիտարական տրանսպորտի ախտահանման համար:

8. Միջոցը նախատեսված է ձեռքերի հիգիենիկ մշակման, վիրաբույժների, վիրաբուժական բուժքույրերի, մանկաբարձների և վիրահատություններին ու ծննդաբերություններին մասնակցող այլ բուժանձնակազմի ձեռքերի մշակման համար, վիրահատական դաշտի, ներարկային դաշտի, դոնորների արմնկային ծալքի մշակման համար, մաշկի սանիտարական մշակման համար, ոտքերի մաշկի՝ սնկային հիվանդությունների կանխարգելման նպատակով մշակման համար:

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

9. Տարբեր վարակների ժամանակ սույն հրահանգի 7-րդ կետում ներկայացված օբյեկտների և մակերեսների ախտահանումն իրականացվում է շփման կամ ոռոգման եղանակով, կախված նրանց մակերեսից և ձևից՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Մաշկի մշակումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 2-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

10. Միջոցի ծախսը շփման ժամանակ կազմում է առնվազն 50 մլ 1 մ^2 մշակվող մակերեսի համար:

Աղյուսակ 1

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով՝ տարբեր վարակների ժամանակ

Մշակման օբյեկտ	Հարուցիչ	Ազդեցության ժամանակ, րոպե	Մշակման եղանակ
Սենքերում մակերեսներ, սարքերի և սարքավորումների մակերեսներ	Բոլոր հարուցիչներ	10	Շփում, ոռոգում
	Դերմատոֆիտոն	3	Շփում

Ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր	Mycobacterium terrae	3	Շփում
Պտտվող ատամնաբուժական գործիքներ	Մանրէներ	2	Շփում
	Mycobacterium terrae	3	Շփում
Կոշիկներ՝ կաշվից, գործվածքային, կաշվի փոխարինիչներից, պլաստիկե, ռետինե	Կանդիդա	3	Շփում, ոռոգում
	Դերմատոֆիտոն	3	Շփում, ոռոգում
Ախտորոշիչ սարքավորումներ, սարքավորումների (ՈՒՁՀ և այլն) տվիչներ	Մանրէներ, վիրուսներ	1	Շփում
	Կանդիդա	1	Շփում
	Դերմատոֆիտոն	3	Շփում
	Mycobacterium terrae	3,5	Կրկնակի շփում
Ձեռնոց (կաուչուկից, լատեքսից, նեոպրենից և այլն)	Մանրէներ, վիրուսներ	1	Շփում
	Պոլիոմիելիտ	2	Շփում
	Կանդիդա	1	Շփում
	Դերմատոֆիտոն	3	Շփում
	Mycobacterium terrae	3,5	Կրկնակի շփում

Աղյուսակ 2

Մաշկի մշակում միջոցով

Մշակման օբյեկտ	Միջոցի քանակ, մլ	Ազդեցության ժամանակ, րոպե	Մշակման եղանակ
Ձեռքերի հիգիենիկ մշակում	3	0,5	Շփում
Վիրաբույժների, վիրաբուժական բուժքույրերի, մանկաբարձների և վիրահատություններին, ծննդաբերություններին մասնակցող այլ բուժանձնակազմի ձեռքերի մշակում	6	3	Շփում
Վիրահատական դաշտի մշակում	10	2	Շփում
Ներարկային դաշտի մշակում	5	0,5	Շփում
Դոնորների արմնկային ծալքի մշակում	10	2	Շփում
Մաշկի սանիտարական մշակում (վիրուսներ)	3	2	Շփում
Մաշկի սանիտարական մշակում (մանրէներ, կանդիդա, դերմատոֆիտոն, Mycobacterium terrae)	5	1	Շփում
Ոտքերի մաշկի մշակում՝ սնկային հիվանդությունների	5	3	Շփում

կանխարգելման նպատակով			

3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

11. Միջոցը նախատեսված է արտաքին կիրառության համար:

12. Չլցնել լորձաթաղանթների և բաց վերքերի վրա:

13. Խուսափել աչքերի մեջ լցվելուց:

14. Հեշտ բոցավառվում է: Թույլ չտալ շփում բաց կրակի և միացված տաքացուցիչ սարքերի հետ:

15. Միջոցը պահվում է սերտ փակ տարայի մեջ՝ ծածկ ունեցող, օդափոխվող պահեստային սենքերում, 0^0C-ից մինչև +30^0C ջերմաստիճանում, լույսից պաշտպանված, տաքացուցիչ սարքերից և կրակի աղբյուրից հեռու, դեղերից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում:

16. Նշված պիտանելիության ժամկետի լրանալուց հետո միջոցի կիրառումն արգելվում է:

17. Չի թույլատրվում միջոցն առանց նոսրացնելու լցնել կոյուղու և ձկնաբուծական ջրամբարների մեջ:

4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

18. Աչքերի մեջ միջոցի պատահական լցվելու ժամանակ աչքերը լվանում են մաքուր ջրով 10-15 րոպե, կաթացնել նատրիումի սուլֆացիլի 30 %-ոց լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

19. Ստամոքսի մեջ միջոցի պատահական լցվելու դեպքում խմել ակտիվացված ածուխի 10-20 մանրացված հաբով մի քանի բաժակ ջուր, ստամոքսի լվացում չանել: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

5. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

20. Ըստ որակի ցուցանիշների՝ միջոցը համապատասխանում է սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված պահանջներին և նորմաներին:

Աղյուսակ **3**

Միջոցի որակի ցուցանիշներ

Ցուցանիշ	Նորմա
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	7,0±1,0
Պոլիհեքսամեթիլեն գուանիդին հիդրոքլորիդի զանգվածային բաժին, %	2,3±1,0
Դիդեցիլդիմեթիլ ամոնիումի քլորիդի զանգվածային բաժին, %	0,22±1,0
Իզոպրոպիլ սպիրտի (պրոպանոլ-2)՝ զանգվածային բաժին, %	69-72
Կամ՝ էթիլ սպիրտի զանգվածային բաժին, %	80-84